ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑՈՒ ԲԱՐՈՅԱՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆԸ (ԸՍՏ «ՄԵԿՆՈՒԹԻՒՆ «ԵՐԳ ԵՐԳՈՑԻ»» ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ)

ՎԱՐԴԱՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Երկար ժամանակ Գրիգոր Նարեկացու մատենագրական ժառանգությունն ուսումնասիրվել ու գնահատվել է հիմնականում հայ իրականության մեջ և այն էլ կրոնական ու բանասիրական տեսանկյունից, սակայն վերջին շրջանում համաշխարհային գիտական միտքը հարաճուն հետաքրքրություն է ցուցաբերում նրա նկատմամբ, օրինակ՝ դեռևս անցյալ դարի երկրորդ կեսին լիտվացի նշանավոր բանաստեղծ Էդուարդաս Մեժելայտիսը, առաջադրելով Նարեկացու բարոյափիլիսոփայական հայացքների ուսումնասիրության խնդիրը, գրել է. «Նարեկացին համաշխարհային գրականության մեջ փիլիսոփայական ուղղության ամենահետաքրքիր բանաստեղծներից մեկն է և արժանի է ամբողջական հետազոտության: Ուզում եմ հավատալ, որ ժամանակակից գիտությունն այդ կկատարի: Եվ այն ժամանակ անցած դարերի մեծ մտածողը կկանգնի համաշխարհային պանծալի մտածողների շարքում»[1]: Իսկ ռուս հայտնի գրականագետ և բանաստեղծ Վլադիմիր Ռոգովն այսպես է գնահատել Նարեկացուն. «Եթե հայ ժողովուրդն իր հոգու թանկարժեք ոսկեսփյուռներից կարողանար ներկայացնել միայն այս կերտվածքը, այդ պարագայում դարձյալ նրա համար ապահովված կլիներ ամենապատվավոր տեղերից մեկը համաշխարհային մշակույթի պանթեոնում»[2]:

Գրիգոր Նարեկացու բազմախորհուրդ ստեղծագործության խորքային էությունն ըմբռնելու հարցում առանձնակի հետաքրքիր են նրա «Համառոտիւք բան խրատու վասն ուղիղ հաւատոյ և մաքուր վարուց առաքինութեան» (հետ այսու՝ Խրատ) և «Մեկնութիւն Երգոց Երգոյն Սողոմոնի» աշխատությունները: Ներկայումս Նարեկացու գրական ժառանգությունից մեզ հետաքրքրում է հատկապես վերջինը, որովհետև նրանում քննարկված շատ հարցեր ու դրանց տրված պատասխաններն այսօր ևս չեն կորցրել իրենց կարևորությունը:

---

[1] Տե՛ս **Межелайтис Э.** Читая Нарекаци, Ереван, 1997, էջ 18 (Mejelaytis E., Chitaya Narekaci, Erevan,1997, ej 18):

[2] Տե՛ս **Рогов Вл.** Читая Нарекаци, Ереван, 1974, էջ 90 (Rogov Vl., Chitaya Narekaci, Erevan,1974, ej 90):

Ավելին, ըստ մասնագետների՝ «Երգ երգոցի» մեկնությունը Նարեկացու մատենագրության մեջ նշանակալի է մի շարք առումներով: Համառոտակի անդրադառնանք դրանց:

Ա. Բացառիկ է, որովհետև ծնունդ է ոչ թե սեփական մտահղացման ու ստեղծագործական ինքնաբուխ պոռթկման, այլ թագավորական հանձնարարության: Հանգամանք, որը մի կողմից կաշկանդել ու անվստահ է դարձրել հեղինակին, բայց մյուս կողմից հնարավորություն է տվել արտահայտելու այնպիսի մտքեր ու գաղափարներ, որպիսիք նրա մյուս ստեղծագործություններում կամ չեն հանդիպում, կամ եթե հանդիպում են, ապա ոչ այդպես պարզ ու հստակ:

Բ. Ճիշտ է, հեղինակը համաձայնել է գրել մեկնությունը, բայց մինչև վերջ չի ազատվել այն զգացումից, որ «զբանս սրբոց գրոց օտար մեկնութեամբ» աղավաղելու դեպքում իրեն սպասվում են ոչ փոքր «դատապարտութիւն եւ պատիժք»:

Գ. Խոսքաշատ ու հորդահոս բանաստեղծն այս երկում անընդհատ կապանքներ է դնում իր մտածողությանն ու լեզվին՝ հիշեցնելով, որ, ի տարբերություն այլ մեկնիչների, ինքը ձգտում է համառոտության: Օրինակ՝ «գիտես եթէ զհամառօտն եմ յախորժել» (էջ 287) «զոր այլ վարդապետք մանր կտտեն, ես համառօտեմ» (էջ 308) և այլն: Մեկնիչ Նարեկացին, զգալով իր սկզբունքի վտանգավորությունը, երբեմն թագավոր-պատվիրատուին հարկ է համարում ասել, որ «եթե երկայն կամիս լսել զբանս, երթ առ Նիւսացին Գրիգոր» (էջ 285):

Դ. Հեղինակի զգուշավորությունն ու անազատությունը շատ լավ են երևում հատկապես Երգ երգոցի և աստվածաշնչյան մյուս գրքերից կատարված մեջբերումների առատությունից և դրանց մեկնությունների չափազանց ժլատությունից: Մինչդեռ հակառակ պատկերն ենք տեսնում, երբ մեկնիչն անդրադառնում է իրօրյա խնդիրներին, ասես միանգամից դեն է նետում միտքն ու լեզուն կաշկանդող կապանքները և արտահայտում է այնպիսի գաղափարներ, որոնցից շատերն այսօր էլ չեն կորցրել իրենց արժեքն ու նշանակությունը:

Ե. Այս աշխատությունը Գրիգոր Նարեկացու գրական ժառանգության մեջ բացառիկ է այն առումով, որ նրա բոլոր գործերից միակն է, որ ունի հեղինակի կողմից նշված գրության հստակ թվական, ինչն էլ կարող է մասամբ կողմնորոշիչ լինել Նարեկացու անունով մեզ հասած առանձին գործերի

գրության ժամանակն ու հեղինակային պատկանելության հարցը լուծելու համար:

Զ. Երգ երգոցի մեկնությունը կարևորություն ունի նաև այն առումով, որ գրված լինելով ստեղծագործական հասունության արշալույսին՝ հնարավորություն է տալիս հետևելու բանաստեղծի աշխարհայացքային, գաղափարական ու հոգեբանական էվոլյուցիայի ընթացքին և ըստ այդմ ավելի լավ հասկանալու կյանքի մայրամուտին ստեղծված «Մատեան ողբերգութեան» հրաշք գլուխգործոցը[3]:

Ահա, ինչպես տեսանք, այս աշխատանքը, ունենալով մեծ դեր ու նշանակություն բանաստեղծի ստեղծագործական կյանքում, ինչու չէ նաև ժամանակի հասարակական-քաղաքական մթնոլորտում, ցանկանում եմ ներկա հոդվածով ընթերցողի ուշադրությանը ներկայացնել դրանում տեղ գտած բարոյաբանական մի քանի հիմնահարցեր: Դրանք, կարծում եմ, ինչպես հեղինակի ժամանակներում, այնպես էլ մեր օրերում կարող են կատարել իրենց դրական և ուղղորդիչ դերը՝ հանուն մարդու բարօրության, նրա կյանքը դարձնելով ավելի վեհ ու գեղեցիկ:

1. ԿՆՈՋ ԵՒ ՏՂԱՄԱՐԴՈՒ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԸ «ԵՐԳ ԵՐԳՈՑԻ» ՄԵԿՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

«Երգ երգոցի» մեկնությունում Նարեկացին գտնում է, որ մարդու նկատմամբ Աստծո մեջ եղած սերը նման է հարսի նկատմամբ փեսայի ունեցած սիրուն: Ինչպես փեսան է ցանկանում, որ իր հարսը լինի կատարյալ, գեղեցիկ ու անթերի, այնպես էլ Աստված է ցանկանում մարդուն տեսնել կատարյալ: Հենց այս դիտանկյունից էլ Նարեկացին գնահատում է տղամարդու և կնոջ փոխհարաբերությունը և նրանց փոխադարձ ամենապատվելի սերը. «Արդ, չիք յերկրի պատուականագոյն եւ առաւել քան զսէր առն եւ կնոջ»[4]:

Տղամարդու և կնոջ սերը Աստծուց տրված վեհ զգացմունք է, քանի որ այն մարդկային կյանքի հիմքն ու իմաստն է: «Արդ, յայտ իսկ է, որպէս առաքեալ ասէ, թէ Ադամ ոչ պատրեցաւ յաւձին սուտ խոստումն, որ սատանայիւ, այլ

---

[3] Տե՛ս **Միրզոյան Հ.**, Նարեկացիագիտական հետազոտություններ, Երևան, 2010, էջ 322-325 (Mirzoyan H., Narekaciagitakan hetazotutyunner, Erevan, 2010, ej 322-325):

[4] Տե՛ս **«Մատենագիրք Հայոց»,** հտ. ԺԲ. Անթիլիաս-Լիբանան, 2008, էջ 766 (Matenagirq Hayoc, hator 12.Antilyas-Libanan,2008, ej 766):

կինն պատրեցաւ եւ յանցեաւ, եւ Ադամ յաղագս ոչ բաժանելոյ ի կնոջէն եկեր զպտուղն եւ սիրելոյ զնա, այլ ոչ վասն աստուածանալոյ, որպէս կինն»[5]: Ըստ Նարեկացու՝ տղամարդն Աստծո պատկերով ստեղծված, նրա փառքով կերտված և շնչով ոգեղենացված արարչագործության արդյունք է, իսկ կինը՝ տղամարդուն օգնելու անհրաժեշտ, նրա կողոսկրից առաջացած էակ, առանց որի չկան կյանք, կենսագործունեություն ու հարատևություն: Այս տարասեռ էակները միանում և «ի մի» են դառնում աստվածատուր սիրո միջոցով: Այն մեծ ուժ է, կյանքի աղբյուր, սակայն այն դեպքում, երբ պահվում է օրենքը, ու սիրով են միավորվում և ոչ թե գետնամած հաշվենկատությամբ. «Իսկ որ անբիծ եւ անարատ գայ ի սուրբ ամուսնութիւնն, եւ անճառ սիրով սրբով Հոգւոյն Սրբոյ իցեն միաւորեալ ընդ միմեանս, այնմ աւրհնութեամբն աւրհնին, որով Ադամն եւ Եվայն աւրհնեալ միաւորեցան»[6]: Աստված ստեղծել է Եվային, որպեսզի Ադամը կողակից ունենա, զգա ընկերակցության բերկրանքը եւ, որ ամենակարևորն է, Աստծո նմանությամբ ստեղծված մարդու կերպարը բազմանա: Կարելի է ասել՝ Նարեկացին կարծես թե չի էլ դատապարտում հանուն սիրո տեղի ունեցած կրոնական և այլ ուրացումները: «Նա եւս եւ վասն ընտանեաց սիրոյ բազումք ի Քրիստոսէ իսկ անկան եւ ուրախացան ի հալածանաց ժամանակսն: Այլեւ Ադամ եւս ի դրախտէն եւ ի լուսեղէն փառացն յաղագս կնոջն սիրոյ մերժեցաւ եւ արտաքսեցաւ եւ ոչ վասն Աստուած լինելոյ, այլ ի նորայ սիրոյն ծանր համարեցաւ քակիլ, որ գիտէր ճշմարտապէս, թէ պատժելոց է ինքն յԱստուծոյ, զի ոչ էր անգէտ, այլ լի մարգարէական հոգւով»[7]: Նրա խոսքերից հետևում է, որ զույգի միությունը կոչված է մարդկանց բավարարվածության, երջանկության ու հիացմունքի զգացում պարգևելու:

Ի տարբերություն իր ժամանակի կրոնափիլիսոփայական մտքի, որ զգայական սերը ստորադասում է հոգևոր, բացարձակ կոչվող սիրուն, Նարեկացին գերադասություն չի տալիս ո՛չ մեկին, ո՛չ էլ մյուսին, այլ դրանք դիտարկում է որպես փոխպայմանավորող տարրեր: Զգայական սերը տարբեր սեռերի միջև եղած փոխադարձ զգացմունքն է, նրանց գոյությունն իմաստավորող և պայմանավորող հարաբերությունը: Հետևաբար նրանցից յուրաքանչյուրն առանց մյուսի անկատար է ու թերի:

Իր ժամանակի գերիշխող մտածողության հակառակ՝ Նարեկացին նույնիսկ պատկառելիության ու օրինակելիության առումով կնոջը վեր է դա-

---

[5] Նշվ. աշխ., էջ 766:
[6] Նույն տեղում:
[7] Նույն տեղում:

սում տղամարդուց. «Զի զիամեստութիւն ունին որպէս զկանայս, վասնզի պատկառելի է կանանց ազգ առաւել, քան զարանց»[8]: Ըստ Նարեկացու, թեև Եվան իր փառատենչությամբ մարդկությանը մեղքի մեջ գցեց, բայց Աստվածամորով վերածնվեց, ու վերականգնվեց կնոջ պատիվը. «Նա եւ յետ ուտելոյն ի պտղոյն գիտաց մարգարէութեամբ զփրկութիւնն մեր, զոր ի ձեռն կնոջն էր լինելոց, այսինքն՝ ի ձեռն սուրբ Աստուածածնին, վասն որոյ եւ կեանս կոչեաց զկինն.ապա թէ ոչ այդպէս, զիա՞րդ կոչէր զնա կեանս, որ ամենայն ծննդոց Ադամայ մահու պատճառն եղեւ»[9]: Այս ամենն ապացուցում է, որ կինը արժանի է հարգալից վերաբերմունքի, առավել ևս, որ օժտված է ի վերուստ մայրական առաքելությամբ ու առաքինությամբ: Աստվածամոր կերպարը նկատի ունենալով՝ Նարեկացին գտնում է, որ կինը ոգեշնչող ուժ է, մարդու իդեալը, նրա երջանկությունն ու իմաստությունը:

«Երգ երգոցի» մեկնության մեջ մենք տեսնում ենք նաև իսկական մարմնական սերը, որը գովերգվում է մեր մեկնիչի կողմից: Կարելի է ասել, որ մարդիկ այն ժամանակներում եղել են այնպես, ինչպես որ հիմա են: Նրանք հիացել են գեղեցկությամբ, նրա հմայքով ու ուժով, հաճույք են ստացել դրանից և ընդհանրապես եղել են «մարմնից ու արյունից»: Իսկ արդիականության առումով էլ կարելի է ասել, որ կինը, անկախ նրանից, թե որ դարն է եղել և ինչ բարքեր ու կարգեր են տիրել, ամենքին գերել է իր բնությամբ ու էությամբ: Խնդիրն այն է, որ նա արժանի է ավելի բարձր վերաբերմունքի և գնահատականի, որպեսզի չխախտվի ի վերուստ սահմանված կարգը, ու երջանիկ լինի մարդը:

2. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՐՑԱԴՐՈՒՄՆԵՐԸ «ԵՐԳ ԵՐԳՈՑԻ» ՄԵԿՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Նարեկացու մեկնության մեջ առանձին արժեք ունեն նաև հասարակական-քաղաքական բնույթի հարցադրումները: Լինելով եկեղեցական դասի ներկայացուցիչ՝ Նարեկացին այս աշխատության մեջ ընթերցողին ներկայանում է որպես հասարակական ու քաղաքական այլազան հարցերով հետաքրքրված ջերմեռանդ գործիչ: Նա տիրող ավատատիրական կարգերը, բարքերը և մարդկային հարաբերությունները պայմանավորող դասակար-

[8] Նշվ. աշխ., էջ 775:
[9] Նշվ. աշխ., էջ 767:

գային անհավասարության չարաշահումները քննադատելով՝ զանազան խրատներ է հղում թագավոր-պատվիրատուին. «Որ եթէ շատ եւ եթէ սակաւ ունին շնորհս կամ ժողովուրդս կամ ինչս համարս պարտին տալ երկնից թագաւորին Սողոմոնի հոգեւոր առաջնորդք եւ մարմնաւորք, եպիսկոպոսունք եւ քահանայք, թագաւորք եւ իշխանք եւ այլ պաշտաւնեայք՝ եթէ՞ մարմնաւորք եւ եթէ՞ հոգեւորք: Նա եւ աշխարհականն եւ զինուորն ընդ կնոջ եւ ընդ որդւոց եւ ընդ ծառայից պարտի տալ համարս»[10]: Հասարակ քաղաքացուց մինչև բարձրաստիճան պաշտոնյան պարտավորված է պատասխանատու լինել իր գործում, մարդկային հարաբերություններում, ընտանիքում և այլուր: Քանի որ դրանում արտահայտված են սերը, հարգանքը և հավատը համագործակցության ու նպատակասլացության հանդեպ: «Ով ինչին նայում, դրան էլ նմանվում է»,– գրում է մեկնիչը: Ու այդ առումով բարձրաստիճան պաշտոնյա քաղաքացիները՝ որպես վեհ առաքինություն իրականացնող մարդիկ, իմաստության, արիության, հոգատարության և այլ արժանիքների օրինակներ պետք է դառնան հասարակ քաղաքացիների համար: Հետևաբար, հանուն այդ մեծ գործերի՝ հոգևոր և մարմնավոր առաջնորդները պարտավոր են մարդկանց մեջ արատները նկատել, սիրով ու արցունքներով բժշկել, ինչպես որ իրենց անձի հետ կվարվեին, այլ ոչ թե, իշխանությունից ու կոչումից գոռոզացած, մեծամտորեն անտեսեն: «Եկն հովուել եւ արածել զոչխարս, ոչ եւս ագահ հովուաւք հովուիլ, որպէս եւ ասէ Եզեկիէլիւ մարգարէիւ, որ զարաւտն արմոջ նախ ինքեանք ուտէին եւ զյստակ ջուրսն նախ ինքեանք ըմպէին, եւ զմնացեալսն յինքեանց զընդգետինս հարեալսն զդարմանս եւ զկոխեալսն ի կճղականաց զպղտորեալ ջուրսն թողուին հաւտին»[11]: Օրինակելի առաջնորդությունն այն է, որ երկրի տերն ու տիրակալը խոհեմաբար է կառավարում հպատակներին և դրանով իմաստության օրինակ դառնում նրանց համար. «Այլ զինքն լինել հովիւ՝ ասէ սովիմբ մարգարեիւ, որ ճշմարտությամբ արածէ եւ յանձանձէ եւ ոչ տա գողոց ապականել, այլ առաքինութիւն եւ արդարութիւն ջամբեալ մեզ՝ ժողովէ ի մէնջ շուշանս, այսինքն զծաղիկս հաւատոյ զբանին եւ զսրբութիւն, որով զվարճանայ փեսայն Քրիստոս»[12]: Ժողովուրդը հարսն է, իշխանությունը՝ փեսան: Իշխանության պարտքն է ճարտարությամբ մոտենալ իր գործին: Եթե ուզում է բարեկեցիկ, հարմարավետ և խաղաղ երկիր ունենալ, ապա նախապես անհրաժեշտ է հոգալ առաքինի բարքերի մասին, կրթել և

[10] Նշվ. աշխ., էջ 873:
[11] Նշվ. աշխ., էջ 833:
[12] Նշվ. աշխ., էջ 833-834:

համապատասխան դաստիարակություն տալ հպատակ ժողովրդին, հոգալ նրանց մասին: Նարեկացին, այս մտահղացումներից ելնելով, իր երկում պատկերավոր քննադատում է նրանց, ովքեր չեն մտածում ընդհանուրի շահի մասին և բոլորին մեծ խնդիրների առաջ են կանգնեցնում: Մեկնության մեջ կա հատված, որից պարզորոշ երևում է, թե հեղինակը խնդիր ասելով ինչ նկատի ունի. «Այսինքն զդավանութիւնն եւ զուխտն, զոր ուխտեցին ի ծննդեան աւազանին, սիրել զՀայրն Աստուած եւ զմայրն եկեղեցի, ստեցին եւ աւտարացան», «Նա եւ զաղաւթսն, զոր յեկեղեցւոյն պարտ է առնել՝ առաջի սեղանոյ նորա, ուր Սուրբ Երրորդությունն բնակեալ է, զայն ի գռեհս եւ ի հրապարակս եւ յանսուրբ տեղիս պաշտեն եւ զեկեղեցւոյ պատիւն գռեհաց եւ փողոցաց տան, որ դատապարտութիւն եւ ոչ ողորմութիւն գտանեն: Վասն այսր յանցանաց, որ զեկեղեցի արհամարհեն եւ արտաքոյ զպաշտաւնն կատարեն, բազում բանից եւ ողբալից աւաղանաց պէտք են,որ զայսոսիկ առնեն,եւ այլ ժամանակի պէտք են ասելոյ, զի չի փոքր վնաս այն»[13]:

Սա, ըստ էության ուղղված է թոնդրակեցիների դեմ, որոնք արդեն կային, բայց այնպես ակտիվ չէին, ինչպես դարավերջին: Ահա թե ինչու դեռ մեղմ է և փաստորեն առաջին քայլերից հակադրվել է թոնդրակեցիներին: Ինչպես նկատելի է, Նարեկացին փորձում է հասցեատիրոջն իր գեղեցիկ խոսքի օգնությամբ ու հնարավոր բոլոր օրինակների միջոցով բերել այն համոզմունքին, որ մեծամտությունն ու հպարտությունը, անտարբերությունն ու անգիտությունն այն հուսալի միջոցները չեն, որոնցով կարելի է մարդկանց առաջնորդել և կանգնեցնել նմանատիպ հարցերի առաջ: Նա նաև իրեն հատուկ համեստությամբ հրաշալի օրինակներ է բերում ուսուցիչ-վարդապետների մասին, որն այսօրվա առումով նույնպես խոսուն է: Այս հարցում ևս, ելնելով չափի պահպանման սկզբունքից, մեկնիչը վարդապետների գործունեությունը նմանեցնում է մարդկանց միտքն ու կյանքը քաղցրացնող անուշահոտ յուղի, ովքեր իրենց սրտերի եղածը պետք է տան մարդկանց՝ ոչ շատ խորությամբ ծածկելով անիմանալիները և ոչ էլ խիստ պարզունակ ու դյուրընկալ, այլ միջին դժվարությամբ հաղորդակից դարձնեն Աստծո գիտությանը. «Զի մի՞ զդիւրընկալութեամբ արհամարհեսցի, իբրև զդիւրագիւտ իրս, եւ մի անիմացութեամբն անհուսասցի գիւտի ուսանելն կամեցողաց, այլ սակաւ ջանիւ ի շտեմարանս սրտից ժողովեալ զբանս Գրոց»[14]:

---

[13] Նշվ. աշխ., էջ 843:
[14] Նշվ. աշխ., էջ 828:

Ամեն ինչի չափի պահպանումը ճշմարիտ է և օգտակար, անգամ Աստծո խոսքը քարոզելու պարագայում. հակառակ դեպքում քարոզիչների խոսքերը չեն հասնի իրենց նպատակին, ավելին՝ մի բան էլ իրենց դեմ դուրս կգան: Դժվար չէ նկատել, որ Գրիգոր Նարեկացու այս կարծիքն այժմեական է: Առավել ևս վերջին շրջանում ի հայտ եկած տարատեսակ խմբավորումներ և ուսմունքներ, յուրաքանչյուրն իր ձևով ու չափով, հուսահատության, անհավատության և մոլորության տարբեր աստիճանների են հասցնում իրենց շարքերը ներգրավված քաղաքացիներին: Վերջիններս էլ, բացի նրանից, որ իրենց անձն ու հոգին են նվիրում այդ գաղափար-կաղապարներին, նույնիսկ իրենց հայրենիքի հանդեպ են ատելությամբ լցվում, օտարամոլության են մատնվում, ազգային արժեքներն են ոտնահարում, բանակում չեն ծառայում և այլն, և այլն: Հետևաբար, Նարեկացու այս մտքերը միանգամայն այսօր ևս շատ տեղին են ու օգտակար: Հատկապես, որ տեսնում ենք, թե Նարեկացին ինչպես է հանդիմանում քաղաքական, կրոնական և բարոյական կարգերը ի շահ իրենց ծառայեցնող վերնախավին՝ իշխաններին ու դատավորներին, առաջնորդներին ու հոգևորականներին: Հորդորում է նրանց գործել մարդասիրաբար և եղբայրաբար. «...վասն այնօրիկ տիրեն մեզ,-գրում է նա,-զի ընդ մեր պատերազմ հարկին հարկանել հոգևոր առաջնորդքն ընդ սատանայի, եւ մարմնաւորքն արիւն եւս պարտին հեղուլ ի վերայ մեր եւ պատերազմ տալ ընդ թշնամեաց, եւ եթէ՞ կարասեալ եւ եթէ՞ մահուամբ, թափել ի թշնամեաց: Եվ դատ առնել իրաւամբք անակնառութեամբ անհանգիստ որպէս զԱստուծոյ սպասաւորս եւ զամենայն մարդոյ տուն որպէս զիւր համարել»[15]: Նարեկացու կրոնափիլիսոփայական ընկալմամբ ժողովուրդը հարսն է, կառավարությունը՝ փեսան: Եվ ինչպես հարսն է իրեն ապահով, պաշտպանված, երջանիկ զգում ուժեղ և իմաստուն փեսայի կողքին, այնպես էլ ժողովուրդը պետք է իրեն զգա՝ ճշմարիտ իշխանությանը հպատակվելով: Քրիստոս, լինելով իշխան և տեր ամենայն ինչի, կարող էր բռնանալ և իր զորությամբ վերափոխել ամեն ինչ, բայց դա արեց խոնարհաբար ու կտակեց այդ շնորհը մարդկությանը, ուստի թագավորների, հոգևոր առաջնորդների և իշխանների պարտքն է ամեն հնարավոր միջոց ներդնել հանուն ժողովրդի բարեկեցության:

Կարծում եմ՝ Նարեկացու բարոյափիլիսոփայական այս հարցադրումներն այսօր ևս չեն կորցրել իրենց նշանակությունն ու կարևորությունը, հետևաբար նրա այս աշխատությունից արժանի դասեր կարող է քաղել ամեն ոք՝ թե՛ հասարակ քաղաքացին, թե՛ հոգևոր ու մարմնավոր ղեկավարները:

---

[15] Նշվ. աշխ., էջ 875:

ԱՄՓՈՓՈՒՄ

Հոդվածը բաղկացած է երկու մասից՝ «Գրիգոր Նարեկացու բարոյա-փիլիսոփայությունը ըստ «Մեկնություն «Երգ երգոցի» աշխատության» խորագրի ներքո ի մի հավաքած գաղափարները 10-րդ դարի փիլիսոփա-բանաստեղծ Գրիգոր Նարեկացունն են, որոնք նա առիթ է ունեցել ասելու աստվածաշնչյան «Երգ երգոց» սիրերգությունը մեկնելիս: Վերջինս հեղինակը գրել է թագավորական պատվերով ու նախաձեռնությամբ, ինչն էլ, հավանաբար, պատճառ է հանդիսացել, որ մեկնիչն անդրադառնա իրօրյա խնդիրներին և արտահայտի այնպիսի մտքեր ու գաղափարներ, որոնցից շատերը՝ մարդու անձնական և հասարակական կյանքի բարելավման առումով, այսօր ևս շատ կարևոր են:

«Կնոջ և տղամարդու փոխհարաբերության հիմնահարցը «Երգ երգոցի մեկնության մեջ, բաժինը վերաբերում է երկու տարբեր սեռերի աստվածային մարդկանց փոխհարաբերության հիմնահարցին՝ սիրուն և ամուսնությանը: Իսկ «Հասարակական-քաղաքական հարցադրումները «Երգ երգոցի մեկնության մեջ» բաժնում հնարավորինս վերլուծվում են Գրիգոր Նարեկացու մեկնությունում արտահայտած հասարակական և քաղաքական դիրքորոշումները, նրա գաղափարներն ու մտքերը:

Բանալի բառեր - անակնառութեամբ (անկանխակալությամբ, անաչառությամբ), արտաքսեցաւ (վռնդվեց, հեռացվեց), երկնից թագաւոր Սողոմոն (այլաբանորեն Աստված, իմաստուն արարիչը ամեն ինչի), հոգևոր առաջնորդք (եկեղեցականներ), մարմնաւոր առաջնորդք (արքունի պաշտոնյաներ), պատրեցաւ (խաբվեց, դավվեց, որսվեց), Պատուականագոյն (ազնվական, լավագույն, նախապատիվ):

ЭТИКО-ФИЛОСОФИЯ ГРИГОРА НАРЕКАЦИ СОГЛАСНО ТРУДУ “ИНТЕРПРЕТАЦИЯ “ПЕСНИ ПЕСНЕЙ””

ВАРДАН КАРАПЕТЯН

Статья состоит из двух частей: собранные под заглавием “Этико-философия Григора Нарекаци согласно труду “Интерпретация “Песни песней’’”, идеи, которые он высказал при интерпретации библейской “Песни песней”, принадлежат философу и поэту 10-го века Григору Нарекаци. Свой труд автор написал по королевскому заказу и инициативе, что скорей всего и послужило

причиной тому, что он озвучил мысли и идеи, которые могут сделать личную и общественную жизнь лучше.

“Проблема взаимоотношений мужчины и женщины в интерпретации “Песни песней”: эта часть посвящена вопросу о божественном взамоотношении двух полов, любви и браку.

В разделе “Общественно-политические вопросы в интерпретации Песни Песней” автор статьи по возможности анализирует выраженные в “Интерпретации” Григором Нарекаци социальные и политические позиции, его идеи и мысли касательно этой проблематики.

Ключевые слова - непредвзятость, сослан, небесный цар Соломон, придворные чиновники, обманут, благородный.

GRIGOR NAREKATSI’S PHILOSOPHY OF ETHICS “THE INTERPRETATION OF “SONG OF SONGS”

VARDAN KARAPETYAN

This paper has two parts: “The Philosophy of Ethics of Grigor Narekatsi”, a collection of ideas collected from “The interpretation of the Bible’s “Song of Songs” by Grigor Narekatsi – the philosopher and poet of the 10th century. A piece commissioned and initiated by the king. Probably, there lies the reason for Narekatsi’s consideration of everyday problems, ideas and thoughts many of which are still of great importance and value in improving the life of both individuals and society.

In the second part of “The interpretation of the Bible’s “Song of Songs” Narekatsi relates the notion of man, woman relationship to the concept of God, human being relationship: one of love and marriage. Narekatsi’s position, ideas and thoughts concerning the social and political issues in the “The interpretation of the Bible’s “Song of Songs”, are considered as much as possible in this paper.

Key words – without prejudice, Impartiality, to be expelled, The heavenly king, Solomon, religious leaders, court officials, deceived, tricked, royal, Noble.